



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«25» Տարիք 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 130-Ձ

«ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 1006-Ն որոշման հավելվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 675-Ա հրամանը և «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի մարտի 23-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ երթուղով 2022 թվականի մարտի 27-ից մինչև 2022 հոկտեմբերի 29-ը՝ շաբաթական 4 (չորս) չվերթ հաճախականությամբ

Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 675-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2022 թվականի մարտի 27-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 29-ը՝ շաբաթական 4 (չորս) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 675-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

 Восстановимая подпись

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 003/2022
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ
ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 003/2022
TO THE AIRCRAFT OPERATOR OF REPUBLIC OF ARMENIA FOR TWO AND MORE
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE
REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Ֆլայոնան Արմենիա» ՍՊԸ “Flyone Armenia” LLC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320
Հաճախականությունը Frequency	շաբաթական 4 չվերթ 4 flights per week
Երթուղին Air route	Երևան/UDYZ/ - Ստամբուլ/LTFM/ - Երևան/UDYZ/ Yerevan/UDYZ/ - Istanbul/LTFM/ - Yerevan/UDYZ/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	27/03/2022 մինչև 29/10/2022 27/03/2022 till 29/10/2022

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ACTING CHAIR OF THE
CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

25.03.2022

(տալու
ամսաթիվը)
(date of issue)